

**ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԶԼՄ-ՆԵՐՈՒՄ ՇՐՋԱՆԱՌՎՈՂ
ԱՊԱՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ՝ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ
ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐ
Մելքոնյան Վ. Վ.**

Արդյունավետ հաղորդակցության հաստատումը հասարակության տարբեր շերտերի ու հասարակության և պետական ինստիտուտների միջև ներքին կայուն զարգացման և ժողովրդավարական ինստիտուտների ու արժեքների ամրապնդման կարևորագույն հիմքն է: Այդուհանդերձ, այն իրողությունները, որ ժամանակակից աշխարհում սոցիալական զանգվածային լրատվական միջոցները (ԶԼՄ) լրատվության ու տեղեկատվության հիմնական աղբյուրներն են, իսկ ցանկացած մակարդակում հաղորդակցության կայացման գործում գլխավոր և վճռորոշ դերը պատկանում է հենց «տեղեկատվությանը», առավել մտահոգիչ է դարձնում սոցիալական ԶԼՄ-ներում ապատեղեկատվության տարածման օրեցօր ահագնացող ծավալները և ցանցային անվերահսկողությունը:

Սույն աշխատանքը դիտարկում է հաղորդակցության կայացումը և արդյունավետությունը՝ համապարփակ քննարկման առնելով տեղեկատվության որակային մարտահրավերները:

Բանալի բառեր. սոցիալական ԶԼՄ, տեղեկատվություն, հաղորդակցություն, Ֆեյսբուք, կեղծ լրատվություն, ապատեղեկատվություն:

Նախաբան: Ժամանակակից հասարակությունների երկու տարածված՝ «ցանցային» և «կոմունիկատիվ» բնորոշումները՝ ապատեղեկատվության համատեքստում, հիմնականում գտնվում են դիխոտոմիկ կամ երկատված հարաբերություններում: Այս պնդման

հիմնական ցուցիչը ապատեղեկատվության բացասական ազդեցությունն է սոցիալական մեդիայում արդյունավետ հաղորդակցության իրականացման վրա: Կոմունիկատիվ հասարակություններում, կարևորելով տեղեկատվության դերը, տեղի է ունենում մարդկանց փոխգործակցության նոր ձևերի մշակում՝ հիմնված սկզբունքորեն նոր տեխնոլոգիաների վրա [1]: Այն իրողությունը, որ սոցիալական զանգվածային լրատվական միջոցները (ՁԼՄ) լրատվության ու տեղեկատվության հիմնական աղբյուրներն են, առավել մտահոգիչ է դարձնում ապատեղեկատվության տարածման օրեցօր ահազանացող ծավալները և վերահսկողությունից դուրս գտնվող բնույթը:

Արդյունքում, անկախ այն հանգամանքից, թե ով է իրականում հանդիսանում ապատեղեկատվության կամ ոչ պրոֆեսիոնալ տեղեկատվության հիմնական հասցեատերը կամ նպատակակետը, հասարակությունը ենթարկվում է «բազմակողմանի ցնցման» և «ախտահարվում է»՝ ամեն անգամ իր մեջ և իր շուրջ շրջանառվող «թունավոր տեղեկատվության» հետ միասին:


Սույն աշխատանքը մատնանշում է ապատեղեկատվության ազդեցությունը ժամանակակից առցանց հաղորդակցության վրա՝ տեղեկատվության ձևավորման, տարածման և սպառման համատեքստում:

Հավաստի տեղեկատվությունը՝ արդյունավետ հաղորդակցության հիմք


Ա. Մասլոուն պնդում էր, որ ինքնադրսևորումը մարդու՝ գոյություն ունենալու ցանկությունն է, այլ կերպ ասած՝ մարդու ցանկությունն է դառնալ այն, ինչ կարող է [2]: Տրամաբանորեն ուղղակի և անուղղակի շփման մեջ մտնելով հասարակության մյուս անդամների հետ՝ մարդիկ կառուցում են «հաղորդակցային թունելներ», որը գաղափարների, կարծիքների, գնահատականների և պարզ տեղեկատվության անդադար շրջանառությունն է: Ներկա ժամանակներում այդ թունելները մեծամասամբ կառուցվում են վիրտուալ-սոցիալական հարթակներում: Առցանց հարթակում մարդիկ խոսում են իրենց հետաքրքրությունների մասին, արտահայտում են տեսակետներ և ի ցույց են դնում իրենց քաղաքական կողմնորոշումները: Միևնույն ժամանակ նրանք հետևում են քաղաքական լրատվությանը և տեղեկանում քաղաքական զարգացումների մասին: Քաղաքական գործիչներն իրենց հերթին թիրախավորում են լսարաններ և ծանոթանում են իրենց կողմնակիցների և պոտենցիալ ընտրագանգվածի հիմնական

խնդիրներին ու սպասելիքներին: Մա անդադար ու կենդանի շղթա է, որի հիմքն ու մեկնարկը սոցիալական մեդիայում շրջանառվող տեղեկատվությունն է (նկ. 1, 2):

Կարդում եք քաղաքական լրատվություն սոցիալական հարթակներում 350 մասնակից <եռու՛մ եք քաղաքական գոծիչներին սոցիալական հարթակներում 350 մասնակից



Նկար 1



Նկար 2

Հաղորդակցությունը տեղեկատվության, գաղափարների, գնահատականների կամ զգացողությունների փոխանցումն է մի մարդուց (մարդկանց խումբ) մյուսը՝ մեծամասամբ սիմվոլների միջոցով [3]: Այս համատեքստում հաղորդակցության ամենատեղին սահմանումը կարող է լինել Ի. Ն. Ռոզինայինը, ով հաղորդակցությունը ներկայացնում է որպես մարդկանց կողմից գիտելիք և փոխըմբռնում ձեռք բերելու նպատակով էլեկտրոնային հաղորդակցության օգտագործում տարբեր ոլորտներում, համատեքստերում և մշակույթներում [4]:

Հաղորդակցության իրականացման համար անհրաժեշտ են երկու կարևորագույն բաղադրատարրեր. հաղորդակցող կողմեր (սուբյեկտներ), որոնք շահագրգռված են կամ, նվազագույնը, կամային ներգրավվածություն ունեն գործընթացում, և տեղեկատվություն (ինֆորմացիա), որն առանցքային է և սնում է թե՛ հաղորդակցության սուբյեկտներին, թե՛ հաղորդակցային ողջ գործընթացը:

Հաղորդակցության գործընթացը հիմնականում կարելի է ներկայացնել երկու սխեմաների միջոցով՝ «գծային» կամ «միակողմանի» և «ինտերակտիվ» կամ «երկխոսական»: Ժողովրդավարական հասարակություններում ընդունելի է «ինտերակտիվ» հաղորդակցության սխեման, ինչը ենթադրում է, որ հաղորդակցությունը միակողմանի չէ, այլ ակնկալում է հակարձագանք և նպատակ չունի կտրուկ ազդելու լսարանի վրա ու պարտադրելու սեփական կամքը (դիրքորոշումը):

Ըստ Ա. Մուլվյովի՝ արտաքին միջավայրից ստացված ազդակները՝ որպես հաղորդագրություն, միշտ չէ, որ վերածվում են ինֆորմացիայի: Կախված ազդակներին արձագանքող դերակատարների

պահանջմունքներից՝ այդ հաղորդագրությունը կա՛մ կվերաձվի ինֆորմացիայի, կա՛մ կմնա որպես բացարձակ չեզոք գիտելիք: Այս տրամաբանությամբ՝ ոչ բոլոր տվյալներն են ինֆորմացիա դիտարկվում [5]: Ուստի ոչ բոլոր տեղեկատվությունները ունեն էական նշանակություն, կամ դրանց արժեքը կարող է ի հայտ գալ ավելի ուշ, ուրիշ հանգամանքներում:

Արևմտյան բառարանների համաձայն՝ ինֆորմացիան որոշակի ազդակ է կամ բնութագիր, որը պարունակում է տվյալներ [6]: Մեկ այլ հայտնի սահմանմամբ՝ ինֆորմացիան ինչ-որ մեկի կամ ինչ-որ բանի մասին ստացված կամ սերտած փաստն է [7]: Առաջին սահմանման մեջ մենք գործ ունենք տվյալների հետ: Բառը ինքնին հուշում է, որ տեղեկատվությունը հաստատված և միանշանակ չէ: Երկրորդ սահմանումը նեղացնում և սահմանափակում է եզրույթը՝ վերագրելով այն «փաստին»: Սոցիալական մեդիայի համատեքստում վերջինն առաջ է քաշում մի շարք հակասություններ: Տեղեկատվությունը, որը հիմքն է սոցիալական ՁԼՄ-ների գոյության, ավելի շուտ անհաստատ է, քան թե փաստ, սակայն դա բնավ չի խոչընդոտում, որ այն սպառվի մարդկանց կողմից և մասնակից դառնա նրանց մտածողության և կողմնորոշման ձևավորմանը:

Է. Մեղենը, ամբողջացնելով արևմտյան կողմնորոշման մեջ «ինֆորմացիա» եզրույթի ամենատարածված սահմանումները, կատարում է հետևյալ ճյուղային բաժանումը.

ա. ինֆորմացիա՝ գիտելիքի կրող և փոխանցող, **բ.** ինֆորմացիա՝ շրջակա միջավայրի մասին տվյալ, **գ.** ինֆորմացիա՝ հաղորդակցության գործընթացի մաս, **դ.** ինֆորմացիա՝ ռեսուրս կամ ապրանք [8]:


Հաշվի առնելով այն, որ գիտելիքի փոխանցումը պարզ հաղորդակցային գործընթաց է, իսկ տեղեկատվությունը՝ այդ հաղորդակցության բաղկացուցիչ մաս, ապա մենք ընդունում ենք այն մոտեցումը, որ տեղեկատվությունը տարանջատել հաղորդակցությունից արդարացված չէ: Հ. Լաուֆի խոսքերով՝ տեղեկատվության բաց և ազատ լինելու փաստը նախադրյալն է թափանցիկ հարաբերությունների ու շփման [9]: Միևնույն ժամանակ տեղեկատվության հասանելիությունը թափանցիկ է դարձնում տարբեր ոլորտներ, օրինակ՝ քաղաքակա- նությունը նպաստում է ժողովրդավարության ամրապնդմանը [10]:

Լրատվության որակային չափումները սոցիալական ՁԼՄ-ներում

Որոշ մեկնաբանների կարծիքով լրատվության կեղծման դրդապատճառները կարող են լինել նոր քայլեր տեղեկատվական

պատերազմում, քաղաքական մանիպուլյացիայի ձևեր, այլընտրանքային ճշմարտության խթանման այլ միջոցներ և այլն [11, էջ 47]: Համապատասխանաբար, կեղծ լրատվության տարածումն էլ կարելի է հիմնավորել զանազան շարժառիթներով՝ այս կամ այն երկրի ներքին ու արտաքին անվտանգության սպառնալիքներից մինչև ժողովրդավարական գործընթացներին միջամտություն [11, էջ 54]: Կեղծվում են հասարակական մեծ հնչեղության կամ որևէ թիրախային խմբի համար մեծ կարևորություն ունեցող իրադարձությունները, կեղծվում է համաշխարհային լրահոսի 65%-ը (նկ. 3):

Հանդիպում եք ապատեղեկատվությանը սոցիալական հարթակներում
350 մասնակից



Նկար 3

Այն դեպքում, երբ լեզուն և աշխարհագրական սահմանները կարող են խոչընդոտել մարդկանց դեմատղեմ շփմանը, սոցիալական ՁԼՄ-ները կարողանում են մարդկանց համախմբել՝ անկախ որևէ սահմանափակումից, և սա տեղեկատվությանը համահունչ քայլող և կենսունակ հասարակության վառ ցուցիչներից է [12]:

Անկախ լրատվության ներկայացման ձևաչափից (վիզուալ կերպարներ, տեքստային տեղեկատվություն և այլն)՝ լրատվությունը պետք է համապատասխանի օրենքով նախատեսված այնպիսի դրույթների, ինչպիսիք են՝ հասարակական կյանքի յուրաքանչյուր խնդրի վերաբերյալ հրատապ ու հավաստի տեղեկատվության ներկայացում, հավասարություն, մարդասիրություն, տարակարծություն և այլն [13, հոդված 3]: Լրատվամիջոցները բավարարում են մարդկանց՝ տարաբնույթ աղբյուրներից օբյեկտիվ ու անաչառ տեղեկատվություն ստանալու իրավունքը, իսկ կեղծ և չստուգված լրատվության ներկայացումը հրապարակման ենթակա չէ [13, հոդված 6]:

Ուստի, ի թիվս բազմաթիվ առավելությունների, սոցիալական ՁԼՄ-ները աչքի են ընկնում տեղեկատվության մշակման ու մատուցման բավականին ցածր մակարդակով, ինչը ենթադրում է ցածր որակի, չստուգված լրատվության ձևավորում, հետո նաև վերջինիս ոչ պրոֆեսիոնալ և անհետևողական մատուցում: Ոլորտի փորձագետների պնդմամբ՝ վերոնշյալը մեծամասամբ կապված է այն հանգամանքի հետ, որ սոցիալական ՁԼՄ-ների հիմնումը և գործարկումը դյուրին գործընթաց է, կամ, ինչպես մեղիափորձագետ Լատուրա Բադդասարյանն է ներկայացնում. «Հայաստանում նոր ՁԼՄ հիմնելու ու այն օնլայն տիրույթում «ազատ նավարկության» բաց թողնելու համար մեծ հաշվով պետք է լուծել ընդամենը մի քանի «տեխնիկական» հարցեր՝ ծրագրավորողին պատվիրել բազմաֆունկցիոնալ հարթակի ստեղծումը, թիմ հավաքել, այն վարձատրելու և կայքի անխափան աշխատանքն ապահովելու համար գումար ներդնել» [14]:

Ամփոփում: Այսպիսով, հասարակության տարբեր շերտերի միջև և հասարակության ու քաղաքական վերնախավի միջև հաղորդակցությունը կենսական է կայուն մասնակցային ժողովրդավարության հաստատման համար: Արդյունավետ հաղորդակցության հաստատումը ներքին կայունության և ժողովրդավարական ինստիտուտների ու արժեքների ամրապնդման կարևորագույն առիավատյան է:

Համաձայնելով, որ հաջողված հաղորդակցությունը ենթադրում է հասարակական-քաղաքական արդյունավետ մասնակցություն, ապա կեղծ, մասնակի կեղծ, մանիպուլատիվ կամ անորակ տեղեկատվությունը չի կարող ռացիոնալ հաղորդակցության հիմք լինել, քանի որ այն խաթարում է հաղորդակցող կողմերի միջև երկխոսության ձևավորումը և հնարավոր փոխգործակցությունը: Վերջապես, տեղեկատվության բովանդակային որակն առանցքային է ներհասարակական հաղորդակցության որակի ապահովման տեսանկյունից՝ անկախ այն հանգամանքից, թե վիրտուալ հարթակում ինչ տեսակի տեղեկատվության հետ գործ ունենք՝ գիտելի՞ք կրող, թե՞ պարզապես ինֆորմացիա այս կամ այն երևույթի մասին:

Այս պարագայում սոցիալական մեղիա «արտանետված» ապատեղեկատվությունն է պատասխանատու քաղաքացու կայացման և նրա հասարակական դերի կանխորոշման գործում:

ЦИРКУЛЯЦИЯ ДЕЗИНФОРМАЦИИ В СОЦИАЛЬНЫХ МЕДИА КАК ВЫЗОВ ДЛЯ УСТАНОВЛЕНИЯ ПРОДУКТИВНОЙ КОММУНИКАЦИИ

Мелконян В. В.

Установление эффективных связей (коммуникация) между различными слоями общества и между обществом и государственными институтами является важнейшей основой внутреннего устойчивого развития, укрепления демократических институтов и ценностей. Однако тот факт, что в современном мире социальные сети и средства массовой информации (СМИ) являются основными источниками информации, а основная роль в коммуникации на любом уровне принадлежит "информации", растущий объем распространения дезинформации в социальных сетях и неуправляемость сетями делается все более тревожным явлением.

В данной статье исследуется развитие и эффективность коммуникации, принимая во внимание проблемы качества информации.

Ключевые слова: социальные медиа, информация, коммуникация, Фейсбук, фейковые новости, дезинформация.

THE CIRCULATION OF DISINFORMATION IN SOCIAL MEDIA AS A CHALLENGE FOR ESTABLISHMENT PRODUCTIVE COMMUNICATION

Melkonyan V. V.

The productive communication in different levels of society and between state and society is the core of sustainable development and strong democratic institutions and values. However, the facts that in modern world social media is the main source for news and information and "information" takes responsiveness for the establishment of constructive and successful communication in all levels, the ongoing rates of disinformative dissemination on social media and uncontrolled virtual networks are subjects for growing concerns.

This work aimed at comprehensive discussion of information quality challenges as threats to the establishment of productive communication.

Keywords: social media, information, communication, Facebook, fake news, disinformation.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Саакян А. К., Мелконян Н. А. Проблема обеспечения обратной связи в PR-коммуникациях// Социология и право. 2017. № 3 (37).С. 13-17.
2. Анаева З. К., Хайдаева С. И. Пирамида потребностей Абрахама Маслоу - путь от животного к сверхчеловеку // «Экономика и социум». 2016. № 12(31), часть 1. С. 158-162.
3. Науменко Т. В. Социология массовых коммуникаций в структуре социологического знания.// Социологические исследования. 2003. № 10. С. 39-46.
4. Розина И. Н. Педагогическая компьютерно-опосредованная коммуникация: теория и практика. Educational Technology & Society 2005. 8(2). С. 257-265.
5. Ануфриенко С., Атанесян А., Боташева А., Мелконян Н. Актуальные вопросы массовой информации и политических коммуникаций. Коллективная монография. Ереван. Изд-во ЕГУ. 2017. 215 с.
6. <https://www.merriam-webster.com/dictionary/information> (04.02.2021)
7. <https://www.lexico.com/en/definition/information> (04.02.2021)
8. Madden A. D. A Definition of Information//Aslib Proceedings. 2000. Vol 52, No.9. P. 344-345.
9. Lauth H. J. Demokratie und Demokratie-messung: eine konzeptionelle Grundlegung fur den interkulturellen Vergleich. Wiesbaden: VS Verl. Fur Sozialwissenschaften. 2004. 423 p.
10. Breindl Y., Francq P. Can Web 2.0 applications save e-democracy? A study of how new internet applications may enhance citizen participation in the political process online. // International Journal of Electronic Democracy. 2008. 1(1). P. 15-31.
11. Հովհաննիսյան Ա. Ա., Այվազյան Մ. Գ. «Մեդիա իրավունք» ուսումնական ձեռնարկ: Երևան, «Հայրապետ» հրատ.: 2020: 272 էջ:
12. Barnidge M. Social Affect and Political Disagreement on Social Media // Social Media + Society. 2018, P. 1-12.
13. ՀՀ Օրենքը Մամուլի և զանգվածային լրատվության մյուս միջոցների մասին, Գլուխ 1, հոդված 3 և 6: Մամուլի և զանգվածային լրատվության մյուս միջոցների գործունեության սկզբունքները// <https://www.arlis.am/documentview.aspx?docid=88> (29.09.2021).

14. Բաղդասարյան Լ. Մեդիամետրիկա. Հայաստանյան օնլայն ՁԼՄ-ների «նույնականացման վկայականները»: «Ռեգիոն» հետազոտական կենտրոն: Երևան: 2020: 19 էջ:

Տեղեկություններ հեղինակի մասին

Մելքոնյան Վ. Վ. – ասպիրանտ

Երևանի պետական համալսարան

«Փոլիսինեթ» գիտահետազոտական կենտրոնի համահիմնադիր,

«Քաղաքականության հետազոտական կենտրոն» ՀԿ հետազոտող, փորձագետ

Էլ. փոստ՝ melkonyanviktorya@gmail.com

Տրվել է խմբագրություն՝ 13.10.2021

Գրախոսվել է՝ 08.11.2021